ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 330.34

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ, Հ.Ն. ԳԱԼՍՏՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիտարկվում են տնտեսական երևույթների վերլուծություններում կիրառվող հետազոտության տարբեր գործիքներ, որոնք հաճախ տեսական բովանդակության առումով լինում են հակասական: Փաստորեն գործ ունենք տնտեսական գիտության ճգնաժամի հետ: Վերջինս դեռևս չի նշանակում տեսության ավարտ, քանի որ ճգնաժամի մեջ, ինչպես ցույց է տալիս պատմությունը, միշտ էլ կա արմատական նորացման պահ:

Առանցքային բառեր. տնտեսագիտություն, ճգնաժամ, մեթոդաբանություն, այլընտրանք, պարադիգմ, մարդկային կապիտալ, տնտեսական կարգ:

XX դարի տնտեսագիտությունը, ի տարբերություն նախորդ դարաշրջանի, ամենից առաջ բնութագրվում է հայացքների, դիրքորոշումների բազմակարծությամբ: Տնտեսական երևույթների վերլուծությունների ժամանակ հարկ է լինում կիրառել հետազոտության գործիքներ, որոնք հաճախ տեսական բովանդակության, եզրահանգումների կամ առաջարկությունների առումով լինում են հակասական: Այնուամենայնիվ, մի կողմ թողնելով հետազոտության գործիքակազմի գիտականորեն կայացած լինելու հանգամանքը, դրա գոյությունն արդեն արդարացված է թեկուզ և նրանով, որ կա երկխոսության գործընթաց, որի արդյունքում ստեղծվում են դպրոցներ, նոր ուղղություններ ու մոտեցումներ: Երբ փորձում ենք զուգահեռներ գծել տնտեսական գիտության տեսության էվոլյուցիայի և իրական տնտեսական կյանքի միջև, տեսնում ենք, որ փաստական տվյալները հաճախ չեն համընկնում տեսական աբստրակցիաներին, ինչն ինքնին նշանակում է գիտականության չափանիշի խախտում: Կարող է ստեղծվել տպավորություն, թե գիտական որոշ հետազոտություններ անօգուտ են: Նմանօրինակ հակասությունները կարելի է հաղթահարել՝ անդրադառնալով տնտեսական գիտության զարգացման ներքին հիմնախնդիրներին (պարադիգմին): Այն, որ պրակտիկան չի համապատասխանում տեսությանը, դրանում վերջինս որևէ «մեղք» չունի, ըստ էության, դրանից տուժում է միայն պրակտիկան: Սա արդեն նշանակում է, որ գործ ունենք տնտեսագիտության ճգնաժամի հետ: Հատկանշական է

այն, որ վերջինս իրեն զգացնել է տալիս ոչ միայն տնտեսական պրակտիկայում, այլ հենց տնտեսագիտության տեսության մեջ, այսինքն՝ իմացաբանական մակարդակում: Տնտեսագիտության ցիկլային զարգացումը նույնքան բնական է, որքան տնտեսության ցիկլային դինամիկան, այսինքն՝ տնտեսական կյանքում հակացիկլային գործառույթ իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի նստել նաև տնտեսագիտության փակուղային և ճգնաժամային դրսևորումների հետ: Այս առումով տնտեսագիտության տեսության, ինչպես ցանկացած տեսության հետ, պետք է վարվել շատ զգուշությամբ և սկզբունքայնությամբ [1]: Ճգնաժամը ենթադրում է մի վիճակ, երբ նպատակներին հասնելու գործող միջոցները դառնում են ոչ համարժեք, ինչի արդյունքում ծագում են անկանխատեսելի իրավիճակներ և հիմնախնդիրներ [2]: Կարծում ենք, իրականում այսպիսին է ներկայանում տնտեսագիտության տեսության այսօրվա վիճակը: Գրեթե բոլոր տեսությունները, մեթոդները, գործիքակազմը, որոնցով երկար ժամանակ առաջնորդվում էին տնտեսագետները, հնացել են: Ճգնաժամը, ինչպես նկատում է Թ.Կունը, բնորոշ է գիտությանը: Ճգնաժամերը, որպես կանոն, ծագում են ժամանակ առ ժամանակ, երբ փոխանակ լուծելու առկա հիմնախնդիրները, գիտության մեջ սկսում են ի հայտ բերել բազմաթիվ աբստրակտ կոնցեպցիաներ, որոնք, ըստ էության, գիտությունն ավելի լավը և խորքային չեն դարձնում: 1970-1980 թվականներից այնքան էլ շատ բան չի փոխվել: Մեծանում են առանձին մասնավոր հիմնախնդիրների շուրջ քննարկումները, «բացառությունների ցուցակն ավելի ու ավելի է ընդլայնվում, համառորեն օրակարգ է մտնում այլընտրանքի հարցը»[3], սակայն սկզբունքորեն նոր տեսության ստեղծումը դեռևս մնում է հեռվում:

Հարցի լուծման համար, թե ինչն է անհրաժեշտ փոխել տեսության մեջ, նախ կարևոր է պարզել, թե տեսության մեջ հատկապես ինչը չի տալիս ներկայիս գերակա խնդիրների պատասխանները:

ԽՍՀՄ-ի փլուզմամբ ի հայտ եկավ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների մի ամբողջ համալիր, որը պահանջում էր ռացիոնալ լուծումներ: Սակայն պատմության արագընթաց իրադարձությունները՝ պայմանավորված ներքին ու արտաքին գործոններով, տեսությանը պարտադրեցին փորձել պատասխանել «ինչ հասարակության մեջ ենք ապրում» հարցին: Իրադարձությունների բնական ընթացքն այնպիսին է, որ դժվար է գտնել նման հարցի պատասխանը, քանի որ խախտվել է այն «տնտեսական կարգը» [4], որով կառավարվում էր նախկին տնտեսական համակարգը: Գործնականում առկա է անվերահսկելի քաոս գրեթե բոլոր հետխորհրդային երկրներում. ստեղծվել է մի իրավիճակ, երբ չենք ճանաչում այն հասարակությունը, որտեղ ապրում ենք: Տեսական փաստարկների ճնշող մեծամասնությունը կրում է զուտ նորմատիվային և խորհրդատվական բնույթ,

առանց այս կամ այն հարցի ելակետային իրավիճակի լուրջ հստակեցման: Այսպիսի գիտական հարցադրումների պարադոքսն այն է, որ դրանք հնարավոր չէ ոչ ապացուցել, ոչ էլ հերքել: Իսկ սա արդեն ոչ այլ ինչ է, քան առաջ քաշվող եզրահանգումների ոչ գիտական լինելը: Իրականության համարժեք ներկայացմանը լուրջ խոչընդոտ է մեթոդաբանության անտեսումը, մեղմ ասած՝ գիտության մեջ պատճառականության համակարգի համընդհանուր ուշադրության բացակայությունը: Ուստի բնական է, որ այս պայմաններում ցանկացած քննադատական արտահայտություն ընկալվում է իբրև տնտեսագիտության վերջին ձեռքբերում, ինչը թերևս փաստում է այն մասին, որ բացակայում է գիտության պարադիգմը: Ներկա պայմաններում փոփոխության է ենթարկվում ոչ միայն տնտեսության հետազոտման օբյեկտը, այլ նաև կատարելագործվում է ճանաչողության պրոցեսը: Իրական կյանքում գիտության և պրակտիկայի այս փոխադարձ կապը բավականին բարդ է և հակասական: Մարդկության առջև ծառացած մարտահրավերները՝ պայմանավորված բնական ռեեսուրսների սահմանափակությամբ, հազվագյուտությամբ, բնության ընդհանուր հավասարակշռության խախտման խնդիրներով, երբեմն անվանում են «համաշխարհային զարգացման ճգնաժամային ախտանիշ», դրա տակ նկատի ունենալով աննախադեպ ճգնաժամերի մի ամբողջ շարք, ինչպես տնտեսական, էներգետիկ, պարենային, ժողովրդագրական, հումքային, բնապահպանական և սոցիալ-հոգեբանական: Ներկայիս ճգնաժամը,- նկատում է Օ.Թոֆլերը,- ոչ կապիտալիստական է, ոչ սոցիալիստական, այլ ինդուստրիալ-տեխնոկրատական, որտեղ կասկածի տակ է դրվում հասարակության ավանդական հիմքի գոյությունը՝ տնտեսական աճի ձգտմամբ, մշակույթով, բարոյականությամբ, տնտեսական սկզբունքներով, ավանդույթներով, գիտական չափանիշներով [5]: Փաստորեն առաջ է գալիս նոր գիտական պարադիգմի, իմացամեթոդոլոգիական գործիքակազմի անհրաժեշտություն: Ինչպես վկայում է տնտեսագիտության տեսության պատմությունը, տեսության հիմնախնդիրների վերանայումը տեղի է ունենում խիստ հազվադեպ, երբ գիտության ու պրակտիկայի անկման կրիտիկական մակարդակը գերազանցում է բոլոր թույլատրելի պարամետրերը: Դեռևս իր ժամանակին Պ.Իկինզը նկատել է. «տնտեսական գիտությունը մտել է փակուղի,... Անհրաժեշտ է նոր սկիզբ, տնտեսական մոտեցման մշակում, որը կհամապատասխանի գիտությանը, տեխնոլոգիային, արժեքներին և XX դարավերջի հարաբերություններին»[6]: Նոբելյան մրցանակակիր Մ.Ալլեն այս հարցի շուրջ առավել պատկերավոր է արտահայտվել .«Ինչպես այսօր ֆիզիկան կարիք ունի ընդհանուր ձգողականության, էլեկտրամագնիսականության և քվանտային մեխանիկայի ընդհանուր տեսության, այնպես էլ հումանիտար գիտությունները կարիք ունեն մարդկանց վարքա-

գծի ընդհանուր տեսության» [7]: Բացառված չէ, որ XXI դարի տնտեսագիտության տեսության նոր պարադիգմի հիմքում ընկած լինի ինչպես տեսության, այնպես էլ տնտեսագիտության օբյեկտի սկզբունքորեն նոր մոտեցում, մասնավորապես կենտրոնում լինի մարդը՝ ընտանիքի ինստիտուտով, որն արդեն իր մոտիվացմամբ էապես տարբերվում է նախորդ դարաշրջանների մոտեցումներից:

Տնտեսագիտության պատմության ուսումնասիրությունները լայն առումով ցույց են տալիս, որ այն անընդհատ գտնվել է զարգացման մեջ: Տնտեսական կյանքի երկարատև էվոլյուցիոն գործընթացը ենթադրում է տնտեսական գիտության պարադիգմի փոփոխություն: Ժամանակակից տնտեսագիտության նոր պարադիգմը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին, նրա օբյեկտը ընդլայնվել է մինչև միջազգային մակարդակ, որի հատկությունները ազգային տնտեսության զարգացման մեջ արդեն չեն ընկալվում իբրև երկրորդական, դրանք դարձել են գերակա: Երկրորդ, տնտեսագիտության առարկան սովորական լինելուց, որը բնորոշ էր «էկոնոմիկս»-ին, տեղափոխվել է զարգացման օրենքների և օրինաչափությունների հարթություն: Երրորդ, արտադրության գործոնների ամբողջությունից որպես տնտեսական աճի հիմնական գործոն հատկապես առանձնացվում և կարևորվում է մարդկային գործոնը, որն այլ կերպ անվանվում է «մարդկային կապիտալ»: Չորրորդ, արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, գլոբալ հիմնախնդիրների սրացումը հիմք են տալիս «տնտեսական մարդ» ավանդական բնորոշումից անցում կատարել «ողջամիտ մարդ» բնորոշմանը, որի մոտիվացման մեջ շահույթի մաքսիմալացումը գլխավոր նպատակը չէ: Այստեղ որպես սահմանափակող գործոն հանդես է գալիս հասարակությունն իր կարգավորիչ միջոցառումների բազմաքանակությամբ, ներառյալ դաստիարակությունը, բարոյականությունը, գաղափարախոսությունը, իրավունքը և այլն: Հինգերորդ, նոր հիմնարար գիտության մեջ հաղթահարվում է միջառարկայական մոտեցումը, «գիտելիքի դեֆեկտը»», և «մրցակցություն» հասկացությունը սկսում է ձեռք բերել նեղ իմաստ ու երանգ, այլ խոսքով՝ այն «posteriori» մակարդակի ազդեցությունից դուրս է եկել «priori» մակարդակ: Խոսքն այստեղ վերաբերում է կանխատեսումների, մոդելավորման և պլանավորման հարթություններում առկա մրցակցությանը, այսինքն՝ գործ ունենք ենթադրյալ «միջարտադրական մրցակցության» հետ, որը, բնականաբար, առաջ կբերի ցածր ծախքերի, ցիկլի տատանումների ընդգծված ազդեցություն:

Ներկա պայմաններում տնտեսագիտությունը հանդիսանում է կառավարման հզոր գործոն՝ առաջադրելով մարդկանց վարքագծի նորմերն ու ոլորտները: Այն, ուսումնասիրելով համաշխարհային տնտեսության արմատական փոփոխությունները, իր հերթին ձևավորում է համաշխարհային տնտեսական քաղաքա-

կանություն և նոր տնտեսական կարգ: Նրա ուսումնասիրության տիրույթում են բարձր տեխնոլոգիական կացութաձևերը, որոնցում արտադրվում են յուրահատուկ, ոչ զանգվածային արդյունքներ, քաղաքական ու տնտեսական նոր հարաբերություններ: Այս հատվածում բացակայում է ավանդական մրցակցությունը: Բացի այդ, տնտեսական գիտությունը զբաղվում է նաև զանգվածային սպառման արտադրանք թողարկող տնտեսության հատվածի օրինաչափությունների ուսումնասիրությամբ՝ միաժամանակ իրագործելով իր տեսաբանական գործառույթը: Այս առումով XX դարի նշանավոր տնտեսագետ, նոբելյան մրցանակակիր Վ.Լեոնտևը, խոսելով տնտեսական գիտության զարգացման հիմնախնդիրների և մակարդակի գնահատականի մասին ընդհանրապես, նկատում է, որ դժվար է բացատրել, թե ինչու այնպիսի հարակից բնագավառների, ինչպես մի կողմից՝ դեմոգրաֆիայի, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, մյուս կողմից՝ էկոլոգիայի, կենսաբանության, բժշկության, ճարտարագիտության և այլ կիրառական դասընթացների հետազոտողները այդքան երկար ժամանակ ձեռնպահ են մնացել՝ չարտահայտելով իրենց մտահոգությունը կայուն հավասարակշռության և փայլուն մեկուսացվածության վիճակի մասին, որում ներկայումս հայտնվել են տեսաբան-տնտեսագետները[8]:

Այսպիսով, եթե ցանկանում ենք ունենալ տնտեսական կարգ, նախ պետք է կարգի բերենք մեր մտքերը, ինչն էլ, բնականաբար, պետք է իրագործի ազգային տնտեսական գիտությունը: Ստացվում է այնպես, որ երկրի պատմական զարգացման կրիտիկական պահերին վերջինիս նշանակությունը ավելի մեծ է ստացվում, քան կարելի է մտածել: Հարկ չկա խուսափելու ավանդական տնտեսագիտության հեղինակավոր, բայց արդեն ոչ այնքան նշանակություն ունեցող կատեգորիալ ապարատի քննադատություններից: Իսկ եթե հաշվի առնենք դարաշրջանի առանձնահատկությունները, ապա կարելի է համարձակորեն վկայակոչել Պ.Շտոմպկեի հետևյալ միտքը. «Մեծ տեսության նկատմամբ հասարակության մեջ հետաքրքրությունը ծագում է հատկապես արմատական սոցիալական փոփոխությունների դարաշրջանում»[9]: Ա.Լիբմանը, խոսելով ժամանակակից տնտեսագիտության մասին, նկատում է, որ վերջինիս դեմքը լրջորեն փոփոխվում է [10]: Բայց այդպես էլ հարց է մնում, թե ինչպես և ինչ ուղղությամբ է ընթանում այդ փոփոխությունը: Որոշակի է այն, որ չնայած մեյնստրիմի տեսաբանների բոլոր փորձերին՝ հաշվի առնել այլընտրանքային դպրոցների նորագույն ձեռքբերումներն ու ստեղծել ավելի «պլյուրալիստական» տեսություն, այնուհանդերձ, տարաձայնությունների շրջանակները գնալով աճում են: Ներքին հակասություններն ու անկայունությունն այնքան ակնհայտ են, որ շատ հե-

տազոտողներ արդեն հանդես են գալիս տնտեսագիտության տեսության նոր ճգնաժամի սկզբնավորման մասին հայտարարություններով [11]:

Արևմտյան տնտեսագիտության տեսության ներկայացուցիչների հրապարակումներում յուրաքանչյուր 40-60 տարին մեկ կարելի է հանդիպել տնտեսագիտության «ճգնաժամի» թեմայի շուրջ արծարծումների: Այսպես, 1870-ական թվականներին ազդարարվեց դասական տնտեսագիտության դպրոցի ճգնաժամի սկիզբը՝ պայմանավորված, առաջին հերթին, արժեքի և գնագոյացման դասական տեսությունների՝ կապիտալիզմի զարգացման նոր էտապին հարմարվելու անընդունակությամբ, մասնավորապես առաջին պլան մղվեցին տնտեսական արդյունավետության, ծախքերի և արդյունքների օպտիմալ համադրման, արտադրության հետ մեկտեղ սպառողների կողմից օգտակարության հիմնախնդիրները և այլն:

Արևմտյան տնտեսագիտական միտքը 1870-1890-ական թվականների ճգնաժամը հաղթահարեց մարժինալիստական հեղափոխության միջոցով, որն էլ սկզբնավորեց նեոդասականության տիրապետության շրջանը մինչև 1929-1933թթ. Մեծ դեպրեսիայի սկիզբը: Փաստորեն մարժինալիստները ստեղծեցին ժամանակակից միկրոտնտեսագիտությունը, սակայն գիտական վերլուծությունների այն ոլորտում, որն այժմ անվանվում է մակրոտնտեսագիտություն, նրանց ձեռքբերումները բավականին համեստ էին: Բավական է նշել, որ նեոդասական տնտեսագետների մեծ մասը ընդունում էր, այսպես կոչված, Սեյի շուկաների օրենքը, որն ի վերջո ենթադրում էր ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի հավասարակշռություն: Նկատենք, որ Սեյի օրենքը բացառում էր երկարատև խոշորամասշտաբ գերարտադրության հնարավորությունները:

Նեոդասական ուղղության ճգնաժամը ակնհայտորեն դրսևորվեց Մեծ դեպրեսիայի ընթացքում: Բանն այն է, որ այս ուղղության կողմնակիցները սպառիչ պատասխան չտվեցին մի շարք հարցերի,

- ինչու ծագեց Մեծ դեպրեսիան,
- ինչ պետք է ձեռնարկել այն հաղթահարելու համար,
- ինչ պետք է անել կանխելու 1920-1930-ական թվականների այն տնտեսական աղետները, որին առնչվեց համաշխարհային կապիտալիզմը 1920-1930-ական թվականների սահմանագծին:

Արևմտյան տնտեսագիտության տեսության Ճգնաժամը հաղթահարվեց քեյնսյան հեղափոխության միջոցով: Հենց Քեյնսը հայտնաբերեց կապիտալիզմի ներսում առկա այն մեխանիզմը, որը ծնում է դեպրեսիվ վիճակ, այսինքն՝ ազգային եկամտի աճին զուգընթաց կրճատվում է սպառման հակվածությունը, ի տարբերություն խնայողությունների հակվածությանը, որը ցուցաբերում է աճման

միտում: Քեյնսը գտնում էր, որ տարածության ու ժամանակի մեջ խնայողություն կատարելու (պասսիվ գործառնություն) և ինվեստավորման (ակտիվ գործառնություն) միջև գոյություն ունի որոշակի խզում, այսինքն՝ խնայողությունների մի զգալի մաս չի վերածվում ինվեստիցիաների, այնպես որ ազգի ամբողջական ծախսերը, որպես կանոն լինում են ավելի փոքր, քան ամբողջական եկամուտները: Սա շուկայում հանգեցնում է էֆեկտիվ պահանջարկի քրոնիկ անբավարարության կամ դեֆիցիտի, հզորությունների թերբեռնվածության, զանգվածային գործազրկության ի հայտ գալուն: Նշված իրավիճակը, ըստ Քեյնսի, բնավ չի նշանակում դեպրեսիայի անխուսափելիություն: Վերջինս կարող է կանխվել պետական ակտիվ միջոցառումների միջոցով՝ ուղղված էֆեկտիվ պահանջարկի ապահովմանը, լինեն դրանք բյուջետային, վարկային թե հարկային քաղաքականության գործիքներ: Մասնավորապես, որպես ինվեստավորման հիմնական ուղի մատնանշում էր տարբեր հասարակական աշխատանքների կազմակերպման, ինվեստավորման ձևերի վրա վերահսկողության, ինչպես նաև սակավ ապահովված սոցիալական շերտերի գնողունակության բարձրացման (կենսաթոշակների, նպաստների բարձրացում, արտոնյալ հարկավորում և այլն) միջոցով սպառման հակվածության կարգավորման և այլ հարցերում պետության ակտիվ միջամտության պահանջը, որը դրական ազդեցություն կունենա բնակչության ինվեստիցիոն և սպառողական պահանջարկի, վրա և կազդի մուլտիպլիկատորի էֆեկտի, հետևաբար՝ նաև ազգային եկամտի աճի վրա:

Քեյնսյան հեղափոխությունը արևմտյան տնտեսական գիտությունը ոչ միայն դուրս բերեց 1930-ական թվականների գաղափարական փակուղուց, այլ տեսական հիմք դարձավ հետպատերազմյան տնտեսական վերելքի համար: Ձևավորվում է տնտեսական և տեսական հարաբերական հանգիստ վիճակ, որն ընդհատվում է 1970-1980-ական թվականներին, երբ ճգնաժամային վիճակում է հայտնվում հենց քեյնսյան դոկտրինը:

Այսպիսով, վերջին 50 տարիներին արևմտյան տնտեսագիտությունը ապրել է առնվազն 3 ծանր գաղափարական ճգնաժամ, որոնք ցույց տվեցին նախորդ ուղղությունների, ուսմունքների, տեսությունների անհամապատասխանությունը իրական երևույթներին ու միտումներին: Այնուամենայնիվ, տեսության ճգնաժամը ամեն անգամ հանգեցնում է արգասաբեր բեկման՝ հարաբերաբար վերականգնելով տեսության և պրակտիկայի համապատասխանությունը:

Այսպիսով, ճգնաժամը տեսության մեջ դեռևս չի նշանակում վերջինիս անկում, ավելի ճիշտ, դա այնպիսի վիճակ է, որը նախադրյալներ է ստեղծում հետագա մաքրման և վերածննդի համար: ճգնաժամը տեսության նորացման յուրօրինակ ձև է, բայց ոչ միակ և ամենացանկալի ձևը: Առավել նախընտրելի է

տնտեսագիտության կանոնավոր կատարելագործման մեխանիզմը՝ կառուցված հիմնարար, համակարգային նորամուծությունների հենքի վրա: Ճգնաժամի մեջ, ինչպես ցույց է տալիս պատմությունը, միշտ էլ կա թեկուզ ցավագին, բայց արմատական նորացման պահ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Вайцзеккер Э., Ловинс Э., Ловинс Л**. Фактор четыре. Затрат-половина, отдача-двойная. - М.: Academia, 2000. -400 с.
2. **Кун Т.С.** Структура научных революций.-М.: Прогресс. 1977.- 81 с.
3. **Расков Д.Е**. Экономическая теория как риторика //Вестник С.-Петерб. ун-та. Сер.5.-2005.-Вып.3.-С.15.
4. **Ойкен В.** Основные принципы экономической политики. -М.: Прогресс,1995
5. **Тоффлер О.** Прогнозы и предпосылки // Социалистические исследования.-1987.-Вопросы экономики.-1993.- N1.- С.57.-N5.
6. **Алле М**. Экономика как наука.- М.: Наука для общества, РГГУ,1995.
7. **Леонтьев В**. Экономические эссе-.М.:Политиздат, 1990.- 415 с.
8. **Sztompka P**. Human Agency: the Markxian Tradition and Beyond. The Polich Sociological Bulletin.-1989.-N1.
9. **Либман А.М**. Экономическая теория и социальные науки об экономике: Некоторые направления развития.-М.:ИЭРАН,2007,с.34. См. также Нибман А. Современная экономическая теория: Основные тенденции //Вопросы экономики. -2007.-N3.- С.36-54.
10. **Блауг М.** Тревожные процессы в современной экономической теории//К вопросу о так называемом «кризисе» экономической науки: Материалы теоретического семинара ИМЭМО ¥Рук. Б.А.Мартынов.-М.: ИМЭМО РАН, 2002¤. Баумоль У. Чего не знал Альфред Маршалл: Вклад XX столетия в экономическую теорию. // Вопросы экономики. -2001.- N2. - С.73-107.Ольсевич Ю. «Неортодоксальный взгляд» У.Баумоля на достижения экономической теории в XX веке и ее задачи// Вопросы экономики. -2001.-N12.- С.18-31.

М.К. АГАЯН, А.Н. ГАЛСТЯН

О ПРОБЛЕМАХ РАЗВИТИЯ СОВРЕМЕННОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ НАУКИ

При анализе экономических явлений используются различные научно-исследовательские инструменты, которые с точки зрения теоретического содержания часто противоречат друг другу. Фактически имеем дело с кризисом экономической науки. Последняя пока не означает конец теории, так как в кризисе, как показывает история, всегда есть момент коренного обновления.

Ключевые слова: экономическая наука, кризис, методология, альтернатива, парагидма, человеческий капитал, экономический строй.

M.K. AGHAYAN, H.N. GALSTYAN

PROBLEMS OF THE DEVELOPMENT OF MODERN ECONOMICS

At analyzing economic phenomena, various research tools often contradictory in terms of theoretical content are used. In fact, we are dealing with the crisis in economic science. The latter does not mean the end of the theory yet as in the crisis itself, as history shows, there is always a possibility of radical renovation.

Keywords: economic science, crisis, methodology, alternative, paradigm, , human capital, economic system.

ՀՏԴ 336.763

Ն.Պ. ԱԴՈՆՑ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ներկայացվում են ներդրումների և արժեթղթերի պորտֆելների կառավարման համար անհրաժեշտ բազային գիտելիքներ, արժեթղթերի պորտֆելի ձևավորման գործընթացի փուլեր:

Առանցքային բառեր. ներդրումներ, արժեթղթերի պորտֆելներ, ներդրումային նպատակների սահմանումը, արժեթղթերի վերլուծության իրականացում, պորտֆելի ձևավորումը, պորտֆելի վերահսկում, պորտֆելի արդյունավետության գնահատում:

Հավանաբար մեզանից յուրաքանչյուրը հաճույքով է գումար ստանում և պակաս հաճույքով այն ծախսում: Մեզանից յուրաքանչյուրի առջև վաղ թե ուշ ծագում է սեփական միջոցների անվտանգ պահպանման և, հնարավորության դեպքում, դրանց հավելման հարցը: Սեփական դրամական միջոցների առավել պարզ, հուսալի, սակայն ցածր եկամտաբերությամբ միջոցը բանկային ավանդներն են:

Ազատ դրամական միջոցների դիմաց ավելի բարձր եկամուտներ ստանալու համար անհրաժեշտ է ձեռք բերել արժեթղթեր: Արժեթղթերի նման գնումը կրում է ներդրում անունը: Ներդրումներն ըստ տևողության լինում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, ըստ եկամտաբերության՝ ցածր և բարձր եկամտաբերության, ըստ ռիսկայնության և հուսալիության՝ բարձր, ցածր և առանց ռիսկայնության:

Հարկ է նշել, որ ներդրումների վերաբերյալ կարելի է անել մի շարք եզրակացություններ.

Առաջին. ներդրումները լավ միջոց են սեփական միջոցները ինֆլյացիայից պաշտպանելու և լավ եկամուտ ստանալու համար: